Տ. ԳՅՈՒՏ ՔԱՀԱՆԱ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Միեր)

Ծնվել է 1979 թ. նոյեմբերի 18-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է տեղի, ապա և Մոխրաթաղի միջնակարգ դպրոցներում:

1997-2003 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Միսոն եպիսկոպոս Աղամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. հոկտեմբերի 4-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ամուսնաընտանեկան իրավունքը միջնադարյան Հայաստանում ըստ կանոնական, սովորութային և աշխարհական իրավունքի նորմերի» թեմայով:

2003 թ. հունիսից աշխատանքի է անցել Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնում որպես գործավար քարտուղար:

2003 թ. օգոստոսից նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերակացու:

2004 թ. սեպտեմբերից սպասավորում է Ավանի Ս. Աստվածածին եկեղեցում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: